ՎԵՐԱԿԱՆԳՆԻ ՄԵԶ ՏԵՐ

Բ Մնաց. 29:3 – Իր թագավորության առաջին տարվա առաջին ամսին նա բաց արեց Տիրոջ տան դռները և նորոգեց դրանք:

- **ԵԶԵԿԻԱՆ ՍՐԲՈՒՄ Է ՏԱՃԱՐԸ (Բ ՄՆԱՑ. 29:3):**
- **ԵԶԵԿԻԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ Է ՏԱՃԱՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ (Բ ՄՆԱՑ. 29:3):**
- **ԵԶԵԿԻԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ Է ԶԱՏԻԿԸ (Բ ՄՆԱՑ. 30):**
- **ԵԶԵԿԻԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ Է ՀՈՒԴԱՅԻ ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔԸ (Բ ՄՆԱՑ. 31):**

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. 2 ՄՆԱՑ. 32

1 Այս գործերից և հավատարմությունից հետո եկավ Ասորեստանի Սենեքերիմ թագավորը, մտավ Հուդայի երկիրը և բանակ դրեց պարսպապատ քաղաքների դիմաց և մտածում էր գրավել դրանք:

1. ԵԶԵԿԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԸ ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆ ԷՐ:

4 Թագ. 19:1- 1 Եւ երբոր Եզեկիա թագաւորը լսեց, պատառեց իր հանդերձները եւ քուրձ հագաւ եւ գնաց Տիրոջ տունը:

2. ԵԶԵԿԻԱՅԻ ԵՐԿՐՈՐԴ ՔԱՅԼԸ ԱՍՏԾՈ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆՆ ԷՐ:

5 Եզեկիան ուժեղացավ, վերաշինեց բոլոր քանդված պարիսպները, բարձրացրեց աշտարակները, դրսից մի ուրիշ պարիսպ կառուցեց, նորոգեց Դավթի քաղաքում գտնվող Մելոնը և շատ զենքեր ու ասպարներ պատրաստեց: 6 Նա զորապետներ նշանակեց ժողովրդի վրա, նրանց հավաքեց քաղաքի դռան հրապարակում՝ իր մոտ, և քաղցրությամբ խոսելով նրանց հետ՝ ասաց. 7 Զորացե՛ք և քա՛ջ եղեք, մի՛ վախեցեք և մի՛ զարհուրեք Ասորեստանի թագավորից ու նրա հետ եղած ամբողջ բազմությունից, որովհետև մեզ հետ եղողներն ավելի շատ են նրա հետ եղողներից: 8 Նրա հետ մարմնեղեն բազուկ կա, իսկ մեզ հետ է մեր Աստվածը՝ Տերը, որ մեզ օգնի և մեր պատերազմն ինքը մղի: Եվ ժողովուրդը քաջալերվեց Հուդայի երկրի թագավոր Եզեկիայի խոսքերից:

1 Հով. 4:4 - Դուք Աստծուց եք, որդյակնե՛ր, ու հաղթեցիք նրանց, որովհետև ավելի մեծ է նա, որ ձեր մեջ է, քան թե նա, որ աշխարհի մեջ է:

Եփ. 6:10-11 – Այսուհետև զորացե՛ք Տիրոջով ու նրա զորության ուժով: Եվ Աստծու սպառազինությա՛մբ զգեստավորվեք, որպեսզի կարողանաք սատանայի հնարներին դիմադրել:

3. ԵԶԵԿԻԱՅԻ ԵՐՐՈՐԴ ՔԱՅԼԸ ԴԻՄԱԴՐԵԼ ԹՇՆԱՄՈՒ ՄԵՂԱԴՐԱՆՔԻՆ:

*10 Այսպես է ասում Ասորեստանի Սենեքերիմ թագավորը. “Դուք ի՞նչ բանի եք ապավինել
Երուսաղեմի պաշարման ժամանակ: 11 Չէ՞ որ Եզեկիան ձեզ մոլորեցնում է, որպեսզի ձեզ
սովի ու ծարավի միջոցով մահվան մատնի՝ ասելով, թե՝ Մեր Աստվածը՝ Տերը, մեզ
կազատի Ասորեստանի թագավորի ձեռքից: 12 Չէ՞ որ նա ինքը Եզեկիան հեռացրեց
նորա բարձրաւանդակները եւ զոհասեղանները և ասաց Հուդայի ու Երուսաղեմի
բնակիչներին, թե՝ "Մեկ զոհասեղանի առջև՛ երկրպագություն արեք և դրա վրա՛ խունկ
ծխեք: 13 Դուք գիտեք, թե ես և իմ հայրերը ինչ արեցինք բոլոր մյուս երկրների
ժողովուրդներին: Մի՞թե այդ երկրների ազգերի աստվածները կարողացան նրանց
երկիրն ազատել իմ ձեռքից: 14 Իմ հայրերի բնաջնջած ազգերի բոլոր աստվածներից ո՞ր
մեկն է, որ կարողացավ իր ժողովրդին ազատել իմ ձեռքից, որ ձեր Աստվածը կարողանա
ձեզ ազատել իմ ձեռքից:*

- ***Ամեն ինչ կարող է խառնաշփոթ դառնալ մինչև Տիրոջ ազատագրումը:***

  *16 Եվ դեռ ավելին խոսեցին նրա ծառաները Տեր Աստծու և նրա ծառա Եզեկիայի
  մասին: 17 Սենեքերիմը նամակներ գրեց՝ հայհոյելով Իսրայելի Տեր Աստծուն և նրա
  մասին այսպես ասելով. Ինչպես որ ուրիշ երկրների ազգերի աստվածներն իրենց
  ժողովրդին չազատեցին իմ ձեռքից, այդպես էլ Եզեկիայի Աստվածը չի ազատի իր
  ժողովրդին իմ ձեռքից:*

5. ԵԶԵԿԻԱՅԻ ՉՈՐՐՈՐԴ ՔԱՅԼԸ ԱՂՈԹՔ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԴԵՄ:

*4 Թագ. 19:14 - Եզեկիան դեսպանների ձեռքից վերցրեց նամակները և կարդաց դրանք,
ապա վեր կացավ գնաց Տիրոջ տուն, և Եզեկիան դրանք տարածեց Տիրոջ առաջ:*

*Բ Մնաց. 32:20 – Եզեկիա թագավորը և Ամոսի որդի Եսայի մարգարեն աղոթեցին այս
բանի համար և աղաղակեցին դեպի երկինք:*

6. ԱԶԱՏԱԳՐՈՒՄ:

*21 Եւ Տերը մի հրեշտակ ուղարկեց և բնաջնջեց Ասորեստանի թագավորի բանակում
գտնվող բոլոր քաջարի զորականներին, զորավարներին և իշխաններին, և նա ամոթով
վերադարձավ իր երկիրը, մտավ իր աստծու տունը, և այնտեղ նրա երանքից ելած
որդիները սրով սպանեցին նրան: 22 Այսպես Տերը Եզեկիային և Երուսաղեմի
բնակիչներին ազատեց Ասորեստանի Սենեքերիմ թագավորի ու բոլորի ձեռքից և ամեն
կողմից պաշտպանեց նրանց:*

*Հով. 8:10 – Այդժամ Հիսուսը վեր նայեց և նրան ասաց. Ո՛վ կին, քեզ
ամբաստանողները որտե՞ղ են. քեզ ոչ ոք չդատապարտե՞ց:*

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: